

Այլ եթէ առաւելագանց թուիցի այսպիսեաց ոմանց մարտակ-
ցութեամբ յաղթել Լեւոնի, զարմանալի եւս իցէ մենամարտիկն նորա քա-
ջութիւն. իսկ որ 'ի յաղթութենէ անտի հիացումն հանուրց, եւ վստահօրէն
այնուհետեւ յարումն 'ի նա իւրայոցն ազգայնոց, ընդ այս ոչ են զարմանք,
զի եւ չէր մարթ այլազգ լինել:

Եթէ ոչ որպէս արժանն պահանջէ՝ ծանօթք իցեն անձն եւ տոհմն
Ռոստոմայ¹³ եւ յեղանակ արշաւանացն եւ կորանաց, աներկբայ են իրքն,
լռեալ թերեւս յայլակրօն մատենագրաց՝ առ պատկառանաց, այլ յամենայն
մերայոց յիշեցեալ սակաւ ինչ այլայլութեամբ. յորս հաւատարմագոյն
վարկանելի է ժամանակակցին եւ վեհագոյն անձին գրուած, այն է Գրիգո-
րի Տղայոյ կաթողիկոսի՝ յՌդբն Երուսաղեմի. որ թէ եւ զանուն իսկ աս-
պատակողին ոչ յիշէ՝ այլ զդէպսն ողջիկ աւանդէ, ցուցանելով յետ գերու-
թեան Սրբոյ քաղաքին եւ արշաւանացն յԱնտիոք՝ եղեալ զ'ի մեր կոյս ար-
շաւանքս: Եւ որպէս շարայարութիւն տողիցն ծանուցանէ¹⁴, միւս եւս

¹³ Հին համառօտ պատմիչ զարմին Ռուբինեանց, եւ Վահրամ որ ըստ նմանէ վիպասանէ,
Բամայէլացի կամ *յազգէ Բամայէլի* ասեն զՌոստոմ. Գր. Տղայ՝ խառնիխուռն միահոմէ
զցեղն՝ անուամբք Եսաւայ, Քանանու, Հագարու եւ Սառայի. Կիրակոս՝ Թուրքս եւ
Տաճիկս կոչէ զհակառակորդսն, եւ յատկապէս հպատակս սուլտանին Հալպայ եւ
Դամասկոսի. Կիլիկեցի պատմիչն եւ Սմբատ՝ Թուրքման ոմն ասեն:

¹⁴ «Օտար որդիքն Սառային
Միահաղոյն մըտին յերկիրն՝
Որ 'ի նահանգըն Սիւրային.
Առին աւար եւ գերեցին
Զորըս ձեռամբ Անտիոքին:...
Ապա ընդ լեառըն Տօրոսին
Մըտին յաշխարհըն Սիսուանին,
Ուր իշխեցող էր Հայկազնին
Մեծայաղթող Լեւոն արին:
Անդ մեզ եհաս խնամք վերին
Եւ քաղցրացաւ կամք Անեղին.
Եհաս 'ի դաշտ լայնանըստին
Ասպատակաւ՝ զօրու նոցին,
Լեւոն իշխան Կիլիկիին
Մանուկ տիօք, բնութեամբ բարին.
Էառ 'ի ձեռքս զերկսայրին,
Ձայնեաց զանուն սրբոյ խաչին.
Կայթեաց 'ի մէջ պատերազմին,
Որպէս զարծիւ իսկ յերամին.
Եհար ըզկուշտ երիվարին,
Արշաւեցոյց 'ի մէջ նոցին.